ԴՈՒՔ ԲԱՐՈՎ ԵԿԱՔ

Ամեն տարի մայիս ամսին հարավից դեպի հյուսիս՝ Մասիսի կողմից դեպի Արագած, ասես թե ամառանոց էին գալիս կռունկների երամները։ Սքանչելի, կանոնավոր երկշարքով, մայր կռունկի ղեկավարությամբ, հանդարտ, սահուն թռռաջնորդությամբ, հանդարտ ու ինչքով գալիս էին նրանք իրենց հատուկ անուշիկ երգով։

Մենք մեր պապերից ու տատերից լսել էինք, որ «Աստծու սիրած» այդ սքանչելի թռչունները իրենց գուրգուրացող երգով ողջույն ու գարնան ավետիք էին բերում մեզ։ Մափահարում էինք նրանց, փորձում էինք նրանց ձայնով ու եղանակով նրանց պես երգել ու ճչալ ուրախությունից՝ «Դուք բարով եկաք, սիրո՛ւն կռունկներ...»։

Դուք, Մայր Հայրենիքի՝ բախտի բերմունքով օտար աշխարհներում ապրող մեր հարազատ հայ եղբայրնե՛ր, հոգեշնորհ սրբազան եպիսկոպոսնե՛ր և վարդապետնե՛ր, ձեզ կարոտ Հայաստան Հայրենիքին այցելության եք եկել ու լցրել մեր սրտերը անհուն ուրախությամբ։

Դուք բարո՛վ եկաք։

Դուք եկել եք հայ ազգի 1643-ամյա ծերունի, բայց կայտառ Սուրբ Մոր, դարերով աշխարհում ցաք ու ցրիվ իր զավակներին իր գրկումը պահող, մայրական սրտի նրբին թելերով նրանց իրար հետ և պաշտելի Հայաստան Հայրենիքի հետ կապող ու գուրգուրող խանդակաթ Մայր Էջմիածնին այցելության, նրա օրհնությունը խնդրելու որդիական քնքուշ սիրով։

Դուք բարո՛վ եկաք։

Դուք այցելության եք եկել մեր վերածնված, այժմ միայն իսկապես ազատ, անկախ, գեղանի Հայրենիքին, անհամար դպրոցների, գիտության, գեղարվեստի վառ ճրագներով շողշողուն Հայաստանին։ 1922 թվականից մեր հզոր Սովետական Միությունը մեր ժողովրդի ոսկեդարի հիմքն է դրել։ Դուք եկել եք մեզ հետ միասին ձեր ջերմագին շնորհակալությունը ներկայացնելու սովետական ժողովուրդների մեծ առաջնորդ հանճարեղ Ստալինին։

Դուք բարո՛վ եկաք։

Գերմանական ֆաշիստների համաշխարհային արնախում պատերազմը սպառնում էր արյան ծովի մեջ խեղդել նաև հայ ժողովրդին ըստ հնավանդ ծրագրի արյունարբու Վիլհելմ կայսեր՝ թե «Պետք է ջնջել աշխարհի երեսից հայ ազգը և միայն մեկ հայի մորթազերծ անելով, կաշվի մեջը խոտ լցնելով պաճուճապատանք շինել ու դնել թանգարանում ցույց տալու համար, թե մի ժամանակ այսպիսի մի ազգ էլ է եղել աշխարհում «հայ» անունով»։

Արնածարավ ֆաշիստների ստեղծած արյան ծովում՝ սովետական հզորագույն Կարմիր Բանակը մեր օրերի հզոր զորավարներից հզորագույն Ստալինի իմաստուն ղեկավարությամբ ֆիշիստներին խեղդեց, ազատելով նաև հայ ժողովուրդը և մեր Հայաստան Հայրենիքը։

Դուք եկել եք մեր Հայրենիքից հեռու, աշխարհում ցաք ու ցրիվ ապրող մեր սիրելի ազգայինների կողմից ջերմ շնորհակալությամբ ցողված մի ծաղկեփունջ ներկայացնելու ժողովուրդների փրկիչ մեծ Ստալինին։

Դուք բարո՛վ եկաք։

Գերմանական ուայալ վայրենիների արնախում բանակը Կովկասյան լեռնաշխարհը մտնելով, իր աչքերը դեպի Հայաստան, դեպի մեր Մասիսն ու Արագածը սևեռեց, մտմտալով շուտով իր դրոշակը տնկել նաև նրանց գագաթներին։ Սպառնացող վտանգից ցնցվեց մեր ժողովուրդը. նրա սրտերում ասես ձայն տվեց Վարդանանց օրերի քաջասիրտ հալության հայրենասեր հոգին։

«Կպարծենամ հայրենիքիս վեհ
անցյալով,
Նրանք լիքն են՝ ինչպես երկինքն
հայրենական
Վսեմաշուք հաղթանակի լույս
աստղերով—
Անուններով հերոսական»։

Եվ հայ երիտասարդությունը ուժգին արձագանքեց հզոր Ստալինի կոչին ու Կարմիր Բանակի շարքերը մտավ։

Նոր Վարդանանց հերոսակա՜ն օրեր...

Հզոր Կարմիր Բանակը հաղթեց չար գազանին։

Վարդանանց անմահ հիշատակովը ոգեվորված հարյուրավոր հայ գեներալներ, կարմիրբանակայիններ, «Սովետական Միության Հերոս» վեհ կոչման փառքով պսակվեցին, հազարավոր գնդապետներ, կապիտաններ, շարքային զինվորներ, քաջարի հայ աղջիկներ բաց ճակատով Հայրենիք

վերադարձան շողարձակ շքանշաններով։ Հայրենիք վերադարձան հաղթական երգերով և նրա շուրջը իրենցով պսակ բոլորեցին ներկա ու գալիք սերունդների համար պարծանք դառնալով։

Ազգընտիր սիրելի պատգամավորներ. դուք եկել եք մեր հերոսներին, նրանց աշխատանքի հերոս մայրերին ու քույրերին ձեր եղբայրական շնորհակալությունն արտահայտելու և ուրախանալու։

Դուք բարո՛վ եկաք։

Վարդանանց օրերին հայ զորքին արիության, հայրենասիրության ոգի ներշնչողն ու բաջալերողը հայ հոգևորականության ոսկե կաղրն էր Ղևոնդ երեցի գլխավորությամբ։ Ահարկու պատերազմում Հայրապետական Աթոռը թափուր էր մնացել։ Աստված պահել էր մեզ համար Ազգընտիր Տեղակալ Տեր Գևորգ Սրբազան արքեպիսկոպոսին։ Մեր այս օրերում նա հանդիսացավ հայոց նոր Ղևոնդ երեցը։ Նրա հուզիչ կոչերը թե Հայրենիքում և թե աշխարհում ցաք ու ցրիվ ապրող մեր հայ եղբայրներին՝ արձագանք գտան Մայր Հայրենիքում և Սփյուռքում ապրող հայի սրտերում։ Ազգընտիր պատգամավորներ, դուք եկել եք ձեր գոհությունը մատուցելու մեր օրերի քաջարի, վաստակավոր մեծ հայրենասեր Տեր Գևորգ Սրբազան արքեպիսկոպոսին։

Դուք բարո՛վ եկաք։

Տարիներով սգավոր է մեր Մայր Էջմիածինը, սգո քողով են ծածկված Հայրապետական գահն ու գավազանը։ Դուք եկել եք մեր պաշտելի Ս. Էջմիածնի համար Աստծու օգնությամբ արժանավոր Հայրապետ ընտրելու, Հայրապետական գահի վրայից սգո քողը վերցնելու։

Դուք բարո՛վ եկաք։

ՊԱՏՐԻԿ